ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ Է ‘ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ’ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

07.11.2014 10:39

ՀՀ փաստաբանների պալատը այս տարվա հուլիս ամսին առաջարկ է ստացել անդամակցել «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությանը, որին համաձայնել է և անդամակցության հայտ է ներկայացրել: 2014թ. հոկտեմբերի 18-ի Միության ընդհանուր ժողովում քննարկվել և հաստատվել է Հայաստանի փաստաբանների պալատի անդամակցության մասին օրակարգային հարցը:

«Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը ստեղծվել է 1985թ Փարիզում, որին այսօր անդամակցում են աշխարհի շուրջ 40 երկրների փաստաբանական միություններ: Այս կազմակերպության կանոնադրական նպատակներն են ապահովել անդամ փաստաբանական միությունների միջև համագործակցությունը՝ հարգելով միմյանց անկախությունը, պաշտպանել անդամ միությունների անկախությունը, զարգացնել պաշտպանության իրավունքը և ապահովել արդար դատաքննության կանոնները, նպաստել անդամ երկրների փաստաբանական համայնքներում փաստաբանի վարքագծի կանոնների պահպանմանը:

Նշենք, որ «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը միավորում է ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրների փաստաբանական միությունները: Հայաստանը ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ասոցացված անդամ է դարձել 2008թ-ից:

Առաջարկվող նորություններ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ

06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ

07.11.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

11.11.2013ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱՋՈՇՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })